ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՈՒՆ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Մյուռոնօրհնեքի արարողությունից հետո Վեհարանում տեղի ունեցավ ընդունելություն:

Ընդունելով ներկաների բարեմաղթանքները և շնորհավորանքները, Վեհափառ Հայրապետը ողջույնի խոսքով դիմեց նրանց.

«Այսօր հայ ժողովուրդը հոգևոր և ազգային վերապարծնքի բերկրալի օրեր է ապրում, - ասաց Նորին Սրբությունը, - և այստեղ, այս սրբազնագույն վայրում, առաջին անգամ, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, ես օրհնեցի Սրբալույս Մյուռոնը: Օրհնեցի երեք կաթսայով՝ այն համոզմունքով, որ պիտի բավմապատկվեն մկրտությունները, ձեռնադրությունները և օծումները»:

Վեհափառ Հայրապետը մեծ ուրախություն պատճառեց ներկաներին, երբ ասաց. «Ինչպես Մեր ընտրությեան և գահակալությեան օրով իմ բարեկամներէն երիտասարդ ազգային բարերար Վաչէ Մանուկեանը իշխանական նուիրատուութիւն էր կատարած Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ յատուկ ֆոնտ հաստատելով՝ ի նպաստ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան այս սրբազնագոյն կենտրոնին, այնպէս և այսօր դարձեալ իմ բարեկամներէն և ազգային բարերար Վահան Շամլեանը իր ուրախութիւնը կը յայտնէ և իր գօրակցութիւնը Մայր Աթոռին՝ ստանձնելով 1997 տարուոյն համար բարերարութիւնը Հոգևոր Ճեմարանի հանրակացարանի նոր շէնքի կառուցման»:

Բուռն ծափահարություններով ընդունվեց Վեհափառ Հայրապետի այս հայտարարությունը:

Ողջույնի խոսք ասաց Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Պրն. նախագահը մյուռոնօրհնության առթիվ բարեմաղթանքի իր խոսքում շեշտեց, որ 3-րդ հազարամյակի նախաշեմին երկու գլխավորագույն խնդիրներ կան լուծելու. Արցախ Աշխարհի վերամիավորումը Հայաստանին և Հայ Եկեղեցու միասնության վերականգնումը:

Այնուհետև Հանրապետության նախագահը բարեմաղթեց ասելով. «Վեհափառ Տեր, Դուք նշեցիք, որ հին Մյուռոնը ավարտվեց հինգ տարվա ժամանակահատվածում: Ես մաղթում եմ, որ Ձեր նոր օրհնյալ երեք կաթսա Մյուռոնը էլ ավելի շուտ վերջանա Հայ Եկեղեցու կատարած ձեռնադրությունների և մկրտությունների շնորհիվ ի շահ և ի բարգավաճություն մեր ժողովրդի»:

Ընդունելության ընթացքում Մեսրոպ Արք. Աշճյանը կարդաց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի ողջույնի նամակը: Շնորհավորանքի և ողջույնի խոսքեր ասացին Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկյանը, Թուրքիո Հայոց Պատրիարքությունից՝ Շահան Արք. Սվաճյանը, Միտրոպոլիտ Պիտիրիմը, Սիսալցիայի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Սերգել Եպիսկոպոսը:

Բացառիկ ոգևորության, ազգային միասնության, հոգևոր վերապարծնքի և վերանորոգումի օր եղավ սեպտեմբերի 8-ը Ս. Էջմիածնի դարավոր պատմության մեջ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ